



ԿԱՐՄԻՐ ՔՐԵՒՋ

«—Ես գրում եմ կարմիր քրեփիջի մասին։ Դու տես-
նո՞ւմ ես նրան։

Մի ինչ որ ահագին, կարմիր և արթւնաներկ կանգ-
նած էր գլխիս և անառամ քրեփում էր։

—Դա կարմիր քրեփիջ է։ Երբ երկիրը խելագարում
է, նա սկսում է այդպէս քրեզալ։ Կարծեմ դու գիտես
արգէն, որ երկիրը խելագարուել է։ Նրա վրայ չկան ոչ
ծաղիկներ, ոչ երգեր, նա դարձել է կլոր, մերկ և կար-
միր, ինչպէս մի գլուխ, որից կաշին պոկել են։ Դու տես-
նո՞ւմ ես նրան։

—Այն, տեսնում եմ։ Նա քրեփում է։

—Նայիր, թէ ինչ է կատարում նրա ուզեղի հետ։
Նա կարմիր է որպէս արեան շփոթ, նա խճճուել է։

—Նա ազաղակում է։

—Նա ցաւ է զգում։ Նրա վրայ չկան ոչ ծաղիկներ,
ոչ երգեր։

—Ինձ համար ծանր է, ես սարսափում եմ։

—Մենք, մեռելներս պառկում են կենդանիների
վրայ։ Տաք է քեզ։

—Տաք է։

—Լաւ է այդպէս։

—Ես մեռնում եմ։

—Զարթիր և աղաղակիր։ Զարթիր և աղաղակիր։ Ես
գնում եմ . . .»

Այսպէս է բնորոշում մարդկային արիւնհեղութիւնն ու պատերազմը ոռւս տաղանդաւոր և երիտասարդ դրող է. Անդրէիը և այն չի կարող բացատրել այլապէս, քան երկրի խելագարութեամբ, որը նա կոչում է «Կարմիր Քրքիջ»: Բայց ազգերի ընդհարման ժամանակ գոյութիւն ունին երկրի սահմաններն ընդարձակելու, գաղթականական, ազգայնական, կրօնական և այլ խնդիրներ, եթէ չեն էլ լինում, գոնէ շահագէտ և եսական, փառասէր ու բռնակալ մարդկանցից ստեղծւում են և նետում հրապարակն խեղճ և միամիտ ժողովրդի ու կեղծաւոր պնակալէզների առաջ՝ վերջիններիս միջոցաւ խարելու և այն մաքրասիրտ պարզ մարդկանց, որոնց խիզը երբէք հաշտուել չի կարող մարդկանց սպանելու, կոտորելու մտքի հետ: Այդպիսի արիւնհեղութիւն դեռ գուցէ մասամբ հասկանալի է մեր երկրի վարդապետութեամբ և դարաւոր սխալ աւանդութիւնների շնորհիւ, այդ տեսակ կեանքի ու դորածունէութեան համար մարդիկ ստեղծել են արդարանալու միջոցներ, թէև դա էլ «Կարմիր Քրքիջ» է, երկրի և մարդկանց խելագարութիւն: Բայց մեզանում այժմս կատարւում է մի դժոխային երևոյթ իւր բոլոր սարսափներով, որը չի կարելի լէօնիդ Անդրէսի գտած սիրուն տերմինավ բացատրել. նրա համար պէտք է դոնել մի ուրիշ անուն, մի այլ ուժեղ խօսքով բնորոշել, որովհետեւ այսաեղ ոչ սահմանների պաշտպանութեան խնդիր կայ, ոչ լեզուի, ոչ հայրենիքի, ոչ զրկանքի և ոչ էլ բռնութեան: Այն, ինչ որ կատարւում է Ռուսաստանում՝ մեր դժբաղդ երկրում, կարելի է կոչել դժոխքի քրքիջ, որովհետեւ նա արդիւնք է մի միայն դժոխային պյժերի: Նա չի ենթարկեւում բանականութեան, մարդկային օրէնքի. գիտութեան և խզճի առաջ արդարանալու ոչ մի միջոց ու հնարաւորութիւնն չունի: Նրա վրայ չի ազդում Աստուծոյ և կրօնի, եղբայրութեան, դրացիութեան, տանջանքի և վշտակցութեան գաղափարը: Նա մոռացել է և Աստուած, և խիզճ, և ժամանակ, և կեանքի արժէքն ու խկական գինը: Մարդիկ կորցրել են մարդկային բոլոր արժանիքը և որպէս

սոված գաղաններ կանգնել են դէմ առ դէմ և կոտորում
են, այրում իրար, չեն խնայում ոչ կին, ոչ երեխայ, ոչ
ծեր և ոչ երիտասարդ՝ Երեկուայ դրացիք՝ մինոյն Երկրից,
նոյն ջրից, նոյն սեղանի հացից ուտողներն ու ապրող
ները, իրար վիճակակից տանջուած չարքաշները՝ գաղանից
էլ ստորացած, արեան ծարաւի մորթուում ու կտոր
կտօր են անում իրար, ի՞նչ անուն տալ այս երեսյթին,
եթէ ոչ «դժոխքի քրքիջ», եթէ ոչ դժոխքի կարմիր պաշ-
տօննաների ստեղծած և երկրիս վրայ լցրած մի սոսկալի
թոյն, որը եկել վարակել և կուրացրել է մարդկանց:
Բայց որ աւելի ցաւալին է, այդ այն է, որ այդ բոցը
հանգնելու գործում ոչ մի մասնակցութիւն չի ուղում
իւր վրայ առնել քսաներորդ դարու իրաւատէր, պաշտօ-
նեայ, օրէնսդիր, մարդկանց խաղաղութիւնը պաշտպանե-
լու համար իւր գոյութիւնը բացատրող և գիտուն ու
գիպլօմաւոր մասը՝ Նրանցից շատ քչերը կան հրապարակի
վրայ, Նրանց մշտական շառաչող զէնքը չկայ. Գրիք կո-
տըրուել, ուղեղը շփոթուել ու խիղճը բթացել է և նրանք
չեն նետուում՝ հրապարակ իրենց ուժեղ ձայնով նորից
որոնելու և ցնցելու մարդկանց խիղճը, վերադարձնելու
Նրանց Աստուծոյ պատկերը՝ Ո՛չ, դժողքը սկսել է քրքջալ.
Նրա կարմիր՝ արեան ծարաւով բորբոքուած բոցերը խլել
են Երկրից Նրա ամենամեծ զարդը, կողոպտել են Երկրի
քագաւորի, մարդու ամենամեծ գանձը՝ միտքն ու խիղճը,
կարմիր անտառատ են դարձրել աշխատանքի և արցունքի
ծովը և աշխարհ լցրել մի միայն դժոխային կարմիր քըր-
քիջով, որին սկսել է ծափ զարկել կարմիր, խելագար
գիտութիւնն ու Նրա օրէնքը և հրապարակը դատարկ է,
զուրկ լուսակիր ձեռքերից ու սրտից: Քսաններորդ դարում
մի հսկայական Երկրի զաւակները բռնուել են կարմիր
քրքիջով և ամայացնում են այդ բազմատանիջ Երկրը,
կարմիր անտառատ դարձնում նրան:

Բայց միթէ մոռացուել է յաւիտենական արդարու-
թիւնը, միթէ մոռացուել է Արարչագործ Զեռքն ու Նրա
արդար դատաստանը, միթէ մոռացուել է արդարութեան

Համար երկնքի վրէժինդրութիւնը, մոռացուել, որ Արէլից սկսած արդար արեան իւրաքանչիւր կաթիլն անպատճի չի մնացել և չը պէտք է մնայ: Եթէ մենք ընդունում ենք յաւիտենական ճշմարտութիւն և արդարութիւն, պէտք է խորունկ հաւատանք այդ օրէնքին, որովհետեւ փաստերը մեր առաջն են և Արարշագործ Զեռքը պատուհասում է զարմանալի վրէժինդրութեամբ: Կարդացէք սոյն համարի այլ եկեղեցեաց բաժնում «Աստուածային պատուհաս» վերնագրով գեղեցիկ յօդուածը, նայեցէք ձեր շուրջը և կըտեսնէք, որ բացի մարդկանց կամայական արդարութիւնից եւ օրէնից՝ կայ յաւիտենական օրէնք և արդարութիւն, որը պատուհասում և պատժում է անարդարութիւնն ու վայրագութիւնը: Դուրս եկէք դատապարտելի չեղոքութիւնից, հրապարակ նետուեցէք կարող ձեռքեր, խնայեցէք արդար վաստակոց ծովը, արգելեցէք, որ չապականնեն այն եղբայրասպանութեամբ: Չը ցնցեն նրա վրէժինդիր կուրծքը արդար արեան վտակներով: Բաւական է, զսպեցէք կարմիր քրքիջը, ապա թէ ոչ, նա կըգայ, գալիս է վարակելու երկիրը, խեղդելու ձեղ կարմիր անապատի կարմիր ծովում և այնուհետեւ նրա անբաժան ընկերները՝ սովու ու հիւանդութիւնները կըգան լրացնելու սարսափների պակասը և կարմիր քրքիջի հանդէպ կըմնան մի միայն սկացած կմախքների բլուրներ և սև աւերակների կոյտեր: Այնուհետեւ չի փրկուիլ ոչ յաղթողն և ոչ յաղթուղը, կըմնան սև բուեր և գիշատիչ թռչուններ, որոնք միայն սիրահար են և փափագող կարմիր գժոխային քրքիջի և միակ խնդակից և ձայնակցող նրա տարտարոսական ձայներին:

Ե. Ճ. Վ. Մ.

